

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ  
ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 02-Ի ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«02» հուլիսի 2024թ.

2024 թվականի հուլիսի 02-ին տեղի ունեցավ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ նաև՝ ՀԽ) նիստ՝ հեռակա քվեարկությամբ:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ համապատասխան նյութերը նախապես ներկայացվել էին Հոգաբարձուների խորհրդի անդամներին «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով:

**Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.**

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի՝ սեփական դիմումի հիման վրա աշխատանքից ազատում.
2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի թեկնածության հաստատում:

**Քվեարկությանը մասնակցել են՝**

- |                 |   |
|-----------------|---|
| Գ. Սանոսյան     | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, ՀԽ նախագահ   |
| Ե. Վարդանյան    | ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ  |
| Ա. Հովհաննիսյան | ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ, ներքին գործերի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ              |
| Ա. Ադիլխանյան   | ՀՀ փոխվարչապետի գրասենյակի ղեկավար, ՀԽ անդամ  |
| Ք. Ղալեչյան     | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող), ՀԽ անդամ |
| Ա. Զոհրաբյան    | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական, ՀԽ անդամ                               |
| Գ. Խաչատրյան    | ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային  |

անվտանգության տեսչական մարմնի ղեկավար, ՀԽ անդամ

**Քվեարկությանը չեն մասնակցել՝**

- Ս. Թովմասյան << կադաստրի կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ
- Ա. Ավանեսյան << ֆինանսների նախարարի տեղակալ, ՀԽ անդամ
- Ն. Տերյան << էկոնոմիկայի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ

**Քվեարկությունը համարվում է կայացած:**

**Քվեարկության արդյունքները՝ 7 կողմ, 0 դեմ:**

Հեռակա կարգով քվեարկության արդյունքում Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշեց.

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանին ազատել աշխատանքից՝ սեփական դիմումի հիման վրա:

2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի պարտականությունների ժամանակավոր կատարումը վերապահել Հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ Սերժիկ Պետրոսյանին:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝



Գ. Սանոսյան

Հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝



Ա. Հայրապետյան